

Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի դպրոցական օլիմպիադայի
առաջին (դպրոցական) փուլի – 2018թ.
/տևողությունը – 120 րոպե/
11-12 – րդ դասարաններ
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. **Աշխարհագրական մտածողության հասկանիշներից չէ.**
 1. տարածականությունը
 2. կոնկրետությունը
 3. համընդհանրությունը
 4. օբյեկտիվությունը
2. **Բնութագրումով որոշել մեթոդը.**

Աշխարհագրության գիտական ճանաչողության հնագույն մեթոդներից է: Աշխարհագրական յուրաքանչյուր օբյեկտի ճանաչողություն սկսվել է դրանով: Այդ մեթոդի հիմքում նախապես եղել է. « Ինչ տեսնում եմ, դրա մասին էլ գրում եմ» սկզբունքը: Ո՞ր մեթոդն է.

 1. քարտեզագրական
 2. համեմատական
 3. նկարագրական
 4. դաշտային դիտարկումների
3. **Հավանա քաղաքում (հս. լ. 23° 30') Արեգակի ճառագայթների անկման անկյունը դեկտեմբերի 22 – ին, կեսօրին կազմում է.**
 1. 66° 30'
 2. 90°
 3. 43°
 4. 47°
4. **Ո՞ր երևույթն է կոչվում «քիմիական արտադրության արտահանում».**
 1. քիմիական արդյունաբերության որոշ ճյուղերի և արդյունաբերության այլ ճյուղերի հետ համատեղ միջճյուղային համալիրների ստեղծումը:
 2. քիմիական արտադրանքը արդյունաբերության այլ ճյուղերում օգտագործելը:
 3. զարգացած երկրների քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները զարգացող երկրներում տեղաբաշխելը:
 4. քիմիական արդյունաբերության ապրանքների արտահանումը:
5. **Ո՞ր դարաշրջանում է տեղի ունեցել կալեդոնյան ծալքավորությունը.**
 1. Արխեյան
 2. Պալեոզոյան
 3. Պրոտերոզոյան
 4. Մեզոզոյան
6. **Հիմնականում ներմուծվող հումքի և վառելիքի հիման վրա պողպատ արտադրող երկրներն են.**
 1. Լեհաստանը և Բրազիլիան
 2. Չինաստանը և Ռուսաստանը
 3. Իտալիան և Ճապոնիան
 4. Ուկրաինան և ԱՄՆ – ը
7. **Ջրսպառող է համարվում.**
 1. ջրային էներգետիկան
 2. ջրային տրանսպորտը
 3. գյուղատնտեսությունը
 4. ձկնային տնտեսությունը
8. **Էքսկլավ է.**
 1. Կալինինգրադի մարզը
 2. Սվազիլենդը
 3. Սան Մարինոն
 4. Լեսոտոն
9. **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

Եթե հակումն արևելյան է, ապա իսկական ազիմուտը որոշելիս պետք է.

 1. մագնիսական ազիմուտը բազմապատկել մագնիսական հակումով,
 2. մագնիսական ազիմուտին գումարել մագնիսական հակումը,
 3. մագնիսական ազիմուտից հանել մագնիսական հակումը,
 4. մագնիսական ազիմուտը բաժանել մագնիսական հակման վրա:
10. **Ո՞ր շարքում են այն ժողովուրդները, որոնք խոսում են տարբեր լեզվախմբերին պատկանող լեզուներով.**
 1. օսեր, տաջիկներ, պարսիկներ
 2. լեհեր, իտալացիներ, ֆիններ

3. բրազիլացիներ, իսպանացիներ, պորտուգալացիներ
4. շվեդներ, գերմանացիներ, անգլիացիներ:

11. Հյուսիսային կիսագնդի ո՞ր շարքի բնական զոնաներն են դասավորված հարավից հյուսիս ճիշտ հերթականությամբ.

1. տափաստաններ և անտառատափաստաններ, բարեխառն գոտու անտառներ, տունդրա
2. անապատներ և կիսանապատներ, բարեխառն գոտու անտառներ, անտառատափաստաններ և տափաստաններ,
3. տունդրա, անտառատափաստաններ և տափաստաններ, բարեխառն գոտու անտառներ,
4. սավանաներ, բարեխառն գոտու անտառներ, անապատներ և կիսանապատներ:

12. Ո՞ր պնդումն է սխալ.

1. ՀՀ արդյունաբերության առաջատար ճյուղերից է մետաղաձուլությունը:
2. Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը ՀՀ արդյունաբերության խոշոր ձեռնարկություններից մեկն է:
3. ՀՀ մետաղաձուլական համալիրի բոլոր ենթաճյուղերն ունեն տեխնոլոգիական ավարտուն ցիկլ:
4. Մինչև 1988 թ. Սլավերդու պղնձաձուլարանը տարեկան արտադրում էր 30 - 40 հազ. տ մաքուր, ռաֆինացված պղինձ:

13. Կենդանական ռեսուրսների պահպանությանն ուղղված միջոցառում չէ.

1. արոտաշրջանառության կազմակերպումը,
2. կենսատեխնիկական միջոցառումների կիրառումը,
3. կլիմայավարժեցումը և վերաբնակեցումը,
4. հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը:

14. Հայկական բարձրավանդակի մեջ լեռնագրական ո՞ր միավորը չի մտնում.

1. Հայկական հրաբխային բարձրավանդակը,
2. Փոքր Կովկասի լեռնագրական համակարգը,
3. Նեքին Տավրոսի լեռնագրական համակարգը,
4. Միջլեռնային զոգավորությունները:

15. ԼՂՀ - ի մասին ո՞ր պնդումն է սխալ.

1. անտառները զբաղեցնում են տարածքի 1/3 - ը,
2. անտառային գոտին սկսվում է 1500 մ բարձրությունից,
3. անտառներում շատ են պտղատուները,
4. անտառներին բնորոշ են փշատերև ծառատեսակները:

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Որքա՞ն է 20 տոննա նավթին համարժեք պայմանական վառելիքի քանակը (տոննայով), եթե նրա ջերմային գործակիցը 1.5 է:
17. Գիտական կայանը հարավային բևեռից հեռու է 1332 կմ: Հարավային ո՞ր լայնությունում է այն գտնվում:
18. Երկրում բրնձի համախառն բերքը կազմում է 210 000 ցենտներ, իսկ ցանքատարածությունների մակերեսը՝ 6000 հեկտար: Որքա՞ն կլինի միջին բերքատվությունը:
19. Գետի երկարությունը 200 կմ է, ակունքի բացարձակ բարձրությունը 3000 մ, իսկ գետաբերանինը՝ 800 մ: Որոշել գետի թեքությունը:
20. Երկրի բնակչության թիվը 1.2 մլն է: Մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը 18 000 մարդ է, իսկ մահացածներինը՝ 12 000: Որոշել բնակչության բնական աճի գործակիցը (%):